# 452 Ո՜վ Տեր, Քո անվամբ տուր մեզ օրհնություն

1. Ո՜վ Տեր, Քո անվամբ տուր մեզ օրհնություն
Ու խաչի արյամբ՝ սրտի մաքրություն,
Կառուցի՜ր Հոգով սուրբ բնակարան
Եվ ամպի սյունով՝ երկնային խորան:

Ե՜կ, ո՜վ Սուրբ Հոգի, կրակով անշեջ
Վառիր աշխարհիկ ամեն բան մեր մեջ,
Օծի՜ր սուրբ յուղով մեր միտքն ու հոգին,
Որ հնազանդվենք Աստծո կամքին:

2. Ո՜վ Տեր, զորությամբ տիրի՜ր մեր սրտին
Եվ Քո սուրբ արյամբ սրբի՜ր մեր հոգին,
Հեղիր սրբությամբ յուղն աստվածային՝
Օրհնյալ օծության երկնային Հոգին:

3. Ո՜վ Հայր, Սուրբ Աստված, Քո խորանն ենք մենք,
Քեզ են նվիրված անոթները մեր.
Մարմին ու հոգի, շունչ ու էություն
Հանձնած Հիսուսին՝ Քեզ ենք փափագում: